ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

Ղ Ե Կ Ա Վ Ա Ր

Երևան – 10, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1
« » 2017 թ. N

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ - ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
պարոն ԱՐԱ ՍԱՂԱԹԵԼՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սաղաթելյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի (Պ-172-02.11.2017-ՊԻՄԻ-011/0 և Պ-172[1-2]-02.11.2017-ՊԻՄԻ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը.

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2017 թվականի նոյեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 1377 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ՎԱՀԵ ՍՏԵՓԱՆՅԱՆ

«ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ՀՈԳԵՄԵՏ (ՀՈԳԵՆԵՐԳՈՐԾՈՒՆ) ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ (*Պ-172-02.11.2017-ՊԻՄԻ-011/0* ԵՎ *Պ-172[1-2]-02.11.2017-ՊԻՄԻ-011/0*) ՓԱԹԵԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Օրենքների նախագծերի փաթեթով առաջարկվում է Հայաստանի Հանրապետությունում հսկման ենթակա թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների կազմը (ցանկը), թունավոր նյութերի ցանկը և դրանց չափաքանակները հաստատել ու փոփոխել համապատասխան գերատեսչության ղեկավարի որոշմամբ: Առաջարկվող օրենսդրական փոփոխությունների անհրաժեշտությունը հիմնավորվում է այն հանգամանքով, որ թմրամիջոցների քիմիական բանաձևերի արագ փոփոխման պատճառով (հանգեցնում է հանցակազմի (զանցակազմի) տարրերի բացակայության) շատ հաճախ անձինք ազատվում են քրեական կամ վարչական պատասխանատվությունից: Ուստի, առաջարկվում է ավելի ճկուն մեխանիզմ, քան գործող կարգավորումն է:

Օրենքների նախագծերի փաթեթով ներկայացված խնդրի կարգավորման անհրաժեշտությունը Հայաստանի Հանրապետության կառավարությունում քննարկման առարկա է դարձել դեռևս 2015 թվականին: Քննարկումների արդյունքների հիման վրա մշակված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության օրենսդրական նախաձեռնությամբ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի քննարկմանը ներկայացված «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» (*Կ-041-29.06.2017-ՊԻՄԻ-011/1, Կ-041[1]-29.06.2017-ՊԻՄԻ-011/1)* Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթը 2017 թվականի հոկտեմբերի 27-ին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովն ընդունել է առաջին ընթերցմամբ: Նշված օրենքների

նախագծերի փաթեթով առաջարկվում է թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի չափերը, ի տարբերություն գործող իրավակարգավորումների, սահմանել Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ՝ դրանով իսկ չեզոքացնելով այն պրակտիկ խնդիրները, որոնք առաջանում են թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի չափերը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի և Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի հավելված-ներով սահմանելու պարագայում: Այդ մոտեցումն ամրագրված է նաև Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից առաջիկայում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի քննարկմանը ներկայացվելիք վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքի նախագծում:

Անդրադառնալով օրենքների նախագծերով (*Պ-172-02.11.2017-ՊԻՄԻ-011/0* և *Պ-172[1-2] -02.11.2017-ՊԻՄԻ-011/0*) առաջարկվող կարգավորումներին՝ հարկ ենք համարում նշել, որ օրենքների նախագծերում պահպանված չէ Հայաստանի Հանրապետության Սահմանադրու-թյան 6-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը, որի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության ու օրենքների հիման վրա և դրանց իրականացումն ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ նախատեսված մարմին-ները կարող են օրենքով լիազորվել ընդունելու ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր: ***Լիազորող նորմերը պետք է համապատասխանեն իրավական որոշակիության սկզբունքին:*** Այսինքն՝ օրենքները պետք է համապատասխանեն որոշակի որակական պահանջների, այն է՝ հստակություն, մատչելիություն, կանխատեսելիություն:

Օրենքի և իրավական որոշակիության սկզբունքի հարաբերակցության վերաբերյալ իր մի շարք որոշումներում, հղում կատարելով նաև ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքին, իրավական դիրքորոշում է հայտնել նաև Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը: Մասնավորապես, իր 2016 թվականի ՍԴՈ-1322 որոշման մեջ վերահաստատել է իր ՍԴՈ-1176 և ՍԴՈ-1213 որոշումներում արտահայտած հետևյալ իրավական դիրքորոշում-

ները. «... իրավական որոշակիության ապահովման տեսանկյունից օրենսդրության մեջ օգտագործվող հասկացությունները պետք է լինեն հստակ, որոշակի և չհանգեցնեն տարաբնույթ մեկնաբանությունների կամ շփոթության» և «... ***իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերության բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի և իրավաչափ:***»:

Այս համատեքստում ներկայացված օրենքների նախագծերի դրույթները խնդրահարույց են. պարզ չէ օրենքների նախագծերում կիրառվող «համապատասխան գերատեսչության ղեկավար» ձևակերպումը: Լիազորող նորմի նման ձևակերպումը հնարավորություն չի տալիս կանխորոշելու դրա իրավական բովանդակությունը: Հարկ է նկատի ունենալ նաև Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտ ընդունելու իրավասություն ունեցող սուբյեկտների շրջանակը («Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է՝ թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության կանխարգելումը Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով իրականացնում են Հայաստանի Հանրապետության դատախազությունը, ոստիկանությունը, ազգային անվտանգության, մաքսային և առողջապահության բնագավառների լիազորված մարմինները՝ իրենց իրավասությունների սահմաններում):

Լիազորող նորմի որոշակիությանը ներկայացվող պահանջների տեսանկյունից թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի չափերը սահմանելու չափանիշները ևս պետք է քննարկվող օրենքների նախագծերի կանոնակարգման առարկա դարձվեին:

Ինչ վերաբերում է օրենքների նախագծերին կից ներկայացված հիմնավորման մեջ նշված այն դիտարկմանը, ըստ որի՝ Հայաստանի Հանրապետության Ազգային

ժողովի քննարկմանը ներկայացված օրենքների նախագծերը խնդիրը լուծում են մասամբ, քանի որ նույնիսկ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ հնարավոր չի լինի արագ արձագանքել կատարվող փոփոխություններին, ապա հարկ է նշել, որ գերատեսչական ակտերի ընդունումը ևս ենթադրում է ժամանակատար գործընթաց, որը համարժեք է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումների ընդունման համար անհրաժեշտ ժամանակահատվածին:

Ամփոփելով շարադրվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը գտնում է, որ օրենքների նախագծերի փաթեթով առաջարկվող կարգավորումները ոչ միայն հակասում են Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում նույն խնդրի կարգավորմանը վերաբերող՝ առաջին ընթերցմամբ ընդունված օրենքների նախագծերի փաթեթով առաջարկվող կարգավորումներին, այլև խնդրահարույց ու թերի են, և առաջարկում է դրանց դրույթները քննարկել առաջին ընթերցմամբ ընդունված օրենքների նախագծերի փաթեթի շրջանակներում:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-172-02.11.2017-ՊԻՄԻ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ՀՈԳԵՄԵՏ (ՀՈԳԵՆԵՐԳՈՐԾՈՒՆ) ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2002 թվականի դեկտեմբերի 26-ին ընդունված «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«1. Հայաստանի Հանրապետությունում հսկման ենթակա թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների կազմը (ցանկը) և չափաքանակները, այդ թվում՝ մանր, զգալի, խոշոր և առանձնապես խոշոր չափերը, մշակումն արգելված՝ թմրանյութեր, հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր պարունակող բույսերի զգալի և մանր չափերը, թունավոր նյութերի ցանկը, խիստ ներգործող նյութերի խոշոր չափերը, մշակումն արգելված՝ թմրամիջոցներ, հոգեմետ (հոգեներգործուն), խիստ ներգործող կամ թունավոր նյութեր պարունակող բույսերի խոշոր և առանձնապես խոշոր չափերը հաստատվում և դրանցում փոփոխությունները կատարվում են համապատասխան գերատեսչության ղեկավարի որոշմամբ:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից մեկ ամիս հետո:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-172[1]-02.11.2017-ՊԻՄԻ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված Քրեական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 266-րդ հոդվածի 5-րդ մասը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«5. Սույն գլխի իմաստով թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի զգալի, խոշոր և առանձնապես խոշոր, ինչպես նաև դրանց պրեկուրսորների խոշոր և առանձնապես խոշոր չափերը սահմանվում և փոփոխվում են համապատասխան գերատեսչության ղեկավարի որոշմամբ:»

Հոդված 2. Օրենսգրքի 275-րդ հոդվածում 5-րդ և 6-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Սույն օրենսգրքում նշված թունավոր նյութերի ցանկը սահմանվում է համապատասխան գերատեսչության ղեկավարի որոշմամբ:

6. Սույն օրենսգրքում նշված խիստ ներգործող նյութերի ցանկը, ինչպես նաև դրանց խոշոր չափերը սահմանվում են համապատասխան գերատեսչության ղեկավարի որոշմամբ:»:

Հոդված 3. Ուժը կորցրած ճանաչել Օրենսգրքի 1-5-րդ հավելվածները:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից մեկ ամիս հետո:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-172[2]-02.11.2017-ՊԻՄԻ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 1985 թվականի դեկտեմբերի 12-ին ընդունված «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 44.1 հոդվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«3. Սույն օրենսգրքում նշված թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մանր չափերը հաստատվում են համապատասխան գերատեսչության ղեկավարի որոշմամբ:»:

Հոդված 2. Օրենսգիրքի 110.2 հոդվածում՝

1) 1-ին մասում «Սույն օրենսգրքի 2-րդ հավելվածով նախատեսված» բառերը փոխարինել «Համապատասխան գերատեսչության ղեկավարի որոշմամբ հաստատված» բառերով,

2) 2-րդ մասում «Սույն օրենսգրքի 2-րդ հավելվածով նախատեսված» բառերը փոխարինել «Համապատասխան գերատեսչության ղեկավարի որոշմամբ հաստատված » բառերով,

3) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Մշակումն արգելված՝ թմրանյութեր, հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր պարունակող բույսերի զգալի և մանր չափերը հաստատվում են համապատասխան գերատեսչության ղեկավարի որոշմամբ:»:

Հոդված 3. Օրենսգրքի 1-ին և 2-րդ հավելվածները ճանաչել ուժը կորցրած:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից մեկ ամիս հետո:

Հիմնավորում

ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ՀՈԳԵՄԵՏ (ՀՈԳԵՆԵՐԳՈՐԾՈՒՆ) ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ

Համաձայն «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին» Հայաստանի Հանրապետության գործող օրենքի Հայաստանի Հանրապետությունում հսկման ենթակա թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների կազմը (ցանկը) հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը, սակայն դրանց չափաքանակները, այդ թվում՝ մանր, զգալի, խոշոր և առանձնապես խոշոր չափերը, մշակումն արգելված՝ թմրանյութեր, հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր պարունակող բույսերի զգալի և մանր չափերը, թունավոր նյութերի ցանկը, խիստ ներգործող նյութերի խոշոր չափերը, մշակումն արգելված՝ թմրամիջոցներ, հոգեմետ (հոգեներգործուն), խիստ ներգործող կամ թունավոր նյութեր պարունակող բույսերի խոշոր և առանձնապես խոշոր չափերը սահմանվում են «ՀՀ Քրեական օրենսգրքի» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի համապատասխան հավելվածներով: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հավելվածներում և ցանկերում կան նյութերի որոշակի անհամապատասխանություններ, բացթողումներ, բացի այդ թմրամիջոցների, հոգեմետ (հոգներգործուն) նյութերի իրացման և տարածման մեջ շահագրգիռ անձինք կարողանում են շատ արագ փոփոխել դրանց քիմիական բանաձևերը, դրանով իսկ խուսափելով վարչական և քրեական պատասխանատվությունից:Դրանց ի հայտ գալու հանգամանքով պայմանավորված՝ ՀՀ ոստիկանության կողմից յուրաքանչյուր տարի նախապատրաստվում և ներկայացվում է ՀՀ քրեական օրենսգրքի և Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի հավելվածներում փոփոխություններ կամ լրացումներ նախատեսող մեկից ավելի նախագծեր, սակայն սահմանված կարգով փոփոխությունները համապատասխան օրենքներում կատարելը շրջանառությունից մինչև ընդունում կարող է տևել մինչև 1 տարի և ավելի: Դա լուրջ խնդիրներ է առաջացնում թմրամիջոցների, հոգեմետ նյութերի, դրանց պրեկուրսորների նոր տեսակների ապօրինի շրջանառությունը կանխարգելելու իմաստով՝ դրանով իսկ հնարավորություն ընձեռելով խուսափել վարչական և քրեական պատասխանատվությունից, քանզի միայն Կառավարության որոշումով ցանկի մեջ ընդգրկված լինելը բավարար հիմք չէ վարչական և քրեական պատասխանատվության ենթարկելու համար: Ներկայումս շրջանառության մեջ է գտնվում և առաջին ընթերցմամբ Ազգային Ժողովում ընդունվել է ՀՀ ոստիկանության կողմից մշակված և Կառավարության կողմից ներկայացված «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերը, որոնք մասամբ լուծում են այս հարցը՝ վերը նշված հավելվածների հաստատումը Կառավարության որոշման տիրույթ տեղափոխելով: Ուստի շահագրգիռ մարմինների հետ քննարկումներից հետո, փաստելով, որ նույնիսկ Կառավարության որոշմամբ հնարավավոր չի լինի այնքան արագ արձագանքել կատարվող փոփոխություններին, որքան որ անհրաժեշտություն կա՝ սույն օրենսդրական փոփոխություններով առաջարկում եմ Հայաստանի Հանրապետությունում հսկման ենթակա թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների կազմը (ցանկը), թունավոր նյութերի ցանկը և դրանց չափաքանակները հաստատել և փոփոխել համապատասխան գերատեսչության ղեկավարի որոշմամբ: